Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ <<ՀՀ Արարատի մարզի Բյուրավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում հայոց լեզու և գրականության (16 դասաժամ) , երաժշտության (7,5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. գրավոր դիմում ՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. փաստաթուղթ (դիպլոմ) <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. անձնագրի պատճենը,
4. ինքնակենսագրություն(Ձև 5),
5. թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական, գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից **մինչև հոկտեմբերի 10-ը ներառյալ,** ամեն օր՝ ժամը 09:00-ից 16:00-ը, բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **հոկտեմբերի 15-ին՝** ժամը 15:00-ին, Արարատի մարզի Բյուրավանի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077)62 02 16 հեռախոսահամարով: